Արձանագրություն N 2
ՀՀԿԱ-ԲԸՀԱՊՁԲ-16/26 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

11 նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի

| | |
|---|---|
| նախագահ (ԳԱՊ)՝ | Աշոտ Գրիգորյան |
| գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Աշոտ Ավետիսյան |
| (ԳԱ)՝ | Դավիթ Գրիգորյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | Լիլիթ Մաղդեսյան |
| քարտուղար՝ (ՄՀմ) | Հայկ Խաչատրյան |
| բացակայում էր (ԲԱ)՝ | Ջուլիետ Համբարձումյան |

Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ 10,400,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 11.11.2016թ.-ի ժ 10:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել է «Մագաս Ինվեստ» ՓԲԸ-ն, հասցեն՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Մալիշկա, գործ. ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված:

Մասնակցի կողմից ներկայացված գնի առաջարկն է՝ 8,633,333 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/:

Մասնակցի կողմից առաջարկվել է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

Մասնակցի հայտի գնահատում

- հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան.
- բացված հայտում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- հայտը գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից գնահատվել է բավարար:

<u>Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին</u>

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. ՀՀԿԱ-ԲԸՀԱՊՁԲ-16/26 ծածկագրով բանակցային ընթացակարգ՝ հայտարարությունը նախապես հրապարակելու գնում կատարելու ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Մագաս Ինվեստ» ՓԲԸ-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ «Մագաս Ինվեստ» ՓԲԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի անվանումն ու տեխնիկական բնութագրերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը ստանալու հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ն, բայց ոչ ուշ քան 2016թ.-ի նոյեմբերի 17-ը:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ ______ Աշոտ Գրիգորյան

գնահատող անդամ (ԳԱ)՝ ______ Աշոտ Ավետիսյան

(ԳԱ)՝ ______ Դավիթ Գրիգորյան

բացող անդամներ (ԲԱ)՝ ______ Լիլիթ Մաղդեսյան

քարտուղար՝ (ՄՀմ) ______ Հայկ Խաչատրյան